FACT SHEET

Employment Development Department
State of California

ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

Հաշմանդամության պետական ապահովագրության (State Disability Insurance, SDI) ծրագիրը նպաստում է Կալիֆոռնիայի տնտեսական անվտանգությանը՝ մատչելի նպաստներ տրամադրելով իրավունակ աշխատողներին: SDI ծրագիրը բաղկացած է աշխատավարձի մասնակի փոխհատուցում հանդիսացող երկու առանձին նպաստներից.

Հաշմանդամության ապահովագրություն (Disability Insurance, DI)

Նպաստներ է տալիս այն աշխատողներին, ովքեր ի վիճակի չեն աշխատել աշխատանքին չառնչվող հիվանդության, մարմնական վնասվածքի կամ հղիության պատճառով: Չնայած աշխատանքային գործունեության հետ կապված հաշմանդամությունների ապահովագրությունը կարգավորվում է անաշխատունակության նպաստների մասին օրենքներով՝ օրենսդրությամբ նախատեսված որոշ հանգամանքներում DI նպաստներ կարող են վճարվել նաև աշխատանքին առնչվող հիվանդությունների կամ մարմնական վնասվածքների համար:

Երբ ապահովագրված աշխատողն իրավունք ունի ժամանակավոր կամ մշտական հաշմանդամության նպաստներ, անաշխատունակության նպաստներ կամ ապրուստի համար տրվող նպաստներ ստանալու օրական DI նպաստի գումարից պակաս չափով, նա կարող է իրավունք ունենալ ստանալու DI դրույքաչափի տարբերությունը:

Վճարովի ընտանեկան արձակուրդ (Paid Family Leave, PFL)

PFL նպաստներ տրվում են այն անձանց, ովքեր արձակուրդ են վերցնում և աշխատավարձի կորուստ են ունենում, որպեսզի խնամեն ծանր հիվանդ երեխային, ծնողին, ամուսնու կամ կնոջ ծնողին, պապիկին կամ տատիկին, թոռնիկին, եղբորը կամ քրոջը, ամուսնուն կամ գրանցված քաղաքացիական զուգընկերոջը, կամ կապվեն նոր երեխայի հետ: Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս *Paid Family Leave Fact Sheet,* DE 8714CF, (Վճարովի ընտանեկան արձակուրդի Ամփոփաթերթ), կամ այցելեք **www.edd.ca.gov/disability** կայքը:

Ելակետային դրույթներ

DI ծրագիրը Կալիֆոռնիա նահանգի Գործազրկության ապահովագրության կանոնագրքում ավելացվել է 1946 թվին: Կալիֆոռնիան, Ռոդ Այլենդը, Նյու Ջերսին, Նյու Յորքը, Հավային և Պուերտո Ռիկոյի Համագործակցությունը միակ նահանգներն են, որոնք հաշմանդամության ապահովագրություն են տրամադրում իրենց աշխատուժին: Կալիֆոռնիան դարձել է DI-ի իրագործման մոդել և նորարարությունների առաջամարտիկ՝ ընդգրկելով աշխատողների և ինքնազբաղ անհատների մի ուրույն խումբ: Կալիֆոռնիան՝

- առաջին նահանգն էր, որ թույլատրեց Կամավորական սխեմաներ (Voluntary Plans, VP) SDI ապահովագրության համար:
- առաջին նահանգն էր, որ SDI ապահովագրություն տրամադրեց գյուղատնտեսության աշխատողներին:
- առաջին նահանգն էր, որ ընտրովի հիմունքներով ապահովագրություն տրամադրեց ինքնազբաղ անձանց:
- առաջին նահանգն էր, որ ապահովագրություն տրամադրեց բնականոն հղիության համար:
- առաջին նահանգն էր, որ նպաստներ տրամադրեց ալկոհոլային կախվածությունից կամ թմրանյութերով հարուցված հիվանդություններից բուժվող հայցվորներին, քանի դեռ նրանք գտնվում էին լիազորված վերականգնողական կենտրոններում: (առավելագույն ծածկույթը՝ 90 օր):
- առաջին նահանգն էր, որ PFL առաջարկեց ընտանիքի ծանր հիվանդ անդամներին խնամող կամ նոր երեխայի հետ կապվող անձանց:

Ո՞վ է ընդգրկված SDI ապահովագրության մեջ:

SDI ծրագրում ընդգրկված են Կալիֆոռնիա նահանգի մոտավորապես 17,9 միլիոն աշխատողներ: Օրենքն ապահովագրություն է նախատեսում գործատուների մոտ աշխատող այն անձանց համար, ովքեր օրացուցային եռամսյակում ստանում են $100-ը գերազանցող վարձատրություն: Կան մի քանի բացառություններ: Հատկապես բացառվում են՝

- որոշ տնային աշխատողները,
- որոշ պետական ծառայողները,
- միջնահանգային երկաթուղիների ծառայողները,
- շահույթ չհետապնդող որոշ գործակալությունների աշխատակիցները,
- կրոնական նկատառումներով հարկերից ազատում պահանջող անհատները:

Որոշ աշխատողների խմբում, ումից չի պահանջվում մասնակցել, բայց ովքեր կարող են ընտրել SDI ապահովագրություն, ընդգրկված են՝

- գործատու հանդիսացող անհատները (անհատական մասնավոր ձեռնարկությունները և գործընկերությունները),
- ինքնազբաղ անձինք, (տե՛ս *Disability Insurance Elective Coverage Fact Sheet,* DE 8714CC, (Հաշմանդամության ապահովագրության ընտրովի ապահովագրության Ամփոփաթերթ)):
- անհատները, ովքեր զբաղված են այլապես բացառված ընտանեկան գործով,
- Կալիֆոռնիա նահանգի գործատուների արտանահանգային ձեռնարկությունները,
- որոշ պետական ծառայողներ:

Նահանգային սխեմա

Կալիֆոռնիա նահանգի SDI ծրագիրն ունի և՛ Նահանգային սխեմա, և՛ Կամավորական սխեմա: Նահանգային սխեմայով ապահովագրությունը պարտադիր է ապահովագրված աշխատողների համար, եթե գործատուն աշխատողների համաձայնությամբ

P.O. Box 826880 • Sacramento, CA 94280-0001

չի ընտրում Կամավորական սխեմայով ապահովագրություն: Իրականացվելով Զբաղվածության զարգացման վարչության (Employment Development Department, EDD) վերահսկողությամբ՝ Նահանգային սխեման ամբողջովին ֆինանսավորվում է Կալիֆոռնիա նահանգի աշխատողների կատարած դրամական ներդրումներով:

Հավաքված ներդրումներն ուղղվում են դեպի Անաշխատունակության ապահովագրության հիմնադրամ (Disability Fund) և օգտագործվում են SDI նպաստների ու ծրագրի կառավարման ծախսերի վճարման համար:

Կամավորական սխեմա

Կամավորական սխեման (VP) EDD-ի Տնօրենի կողմից հաստատված մասնավոր սխեմա է: VP-ն կարող է փոխարինել Նահանգային սխեմային, եթե համապատասխանում է Նահանգային սխեմայի նպաստներին, տրամադրում է առնվազն մեկ ավելի մեծ նպաստ և աշխատողի համար ավելի թանկ չէ, քան Նահանգային սխեման:

Կալիֆոռնիա նահանգի աշխատողների շուրջ 3.4 տոկոսն ապահովագրված է SDI VP-ներով:

Գործատուներն ու աշխատողների խմբերը կարող են գործատուի և աշխատողների մեծամասնության փոխադարձ համաձայնությամբ ստեղծել VP-ներ: Աշխատողը կարող է ընտրել Նահանգային սխեմայով ապահովագրություն՝ չնայած իր աշխատավայրում VP կա:

Իրավունակություն և նպաստներ

DI նպաստները վճարման ենթակա են, երբ ապահովագրված աշխատողն ունենում է աշխատավարձի կորուստ և չի կարող աշխատել հղիության կամ իր գործի հետ չկապված հիվանդության կամ վնասվածքի պատճառով: Նպաստները վճարվում են առավելագույնը 52 շաբաթ:

Նպաստի վճարումներ ստանալու համար անձը պետք է՝

- հայց ներկայացնի՝ կանոնակարգերի համաձայն:
- անցկացնի յոթնօրյա չվճարվող սպասման ժամանակաշրջան: Եթե սկզբնական հայցից հետո 60 օրվա ընթացքում հայց է ներկայացվում նույն կամ առնչվող պատճառով կամ պայմանով, ապա այն կքննվի որպես սկզբնական հայցի շարունակություն, որի համար սպասման ժամանակաշրջան արդեն եղել է: Այդպիսի դեպքերում նոր սպասման ժամանակաշրջան չի լինի:
- հայցի 12-ամսյա բազային ժամանակաշրջանի ընթացքում ստացած լինի առնվազն $300 աշխատավարձերի տեսքով, որոնք ենթակա են SDI ներդրումների:
- ենթարկվի մանրազնին բժշկական քննության, եթե դա պահանջվի:
- ներկայացնի հաշմանդամության վկայական՝ պատշաճ կերպով լիազորված բժշկական կամ կրոնական ծառայողի ստորագրությամբ:

Հայցերը կարելի է ներկայացնել առցանց՝ **www.edd.ca.gov/disability** կայքէջում, կամ փոստով: Սովորաբար, նպաստները վճարվում են ամեն երկու շաբաթը մեկ:

Իրավազրկումներ

SDI ծրագիրը հետևում է ծրագրային ազնվության սկզբունքներին և կձեռնարկի բոլոր հնարավոր միջոցները՝ հայտնաբերելու և կասեցնելու խարդախությունն ու պաշտպանելու Անաշխատունակության ապահովագրության հիմնադրամը: SDI նպաստների վճարումներ չեն կատարվի այն անձանց, ովքեր նպաստներ ստանալու նպատակով միտումավոր կեղծ հայտարարություններ են անում կամ չեն ներկայացնում կարևոր փաստերը:

Հաշմանդամություն ունեցող անձը նույնպես իրավունք չունի DI նպաստներ ստանալու՝

- երբ ստանում է գործազրկության ապահովագրություն (Unemployment Insurance) կամ PFL վճարումներ:
- երբ ստանում է լրիվ աշխատավարձեր (իրար գումարված նպաստների վճարումներն ու աշխատավարձերը սահմանափակված են հաշմանդամությանն անմիջապես նախորդող ընդհանուր շաբաթական աշխատավարձով՝ հանած արտաժամյա աշխատանքների դիմաց վարձատրությունը):
- երբ դատապարտման արդյունքում գտնվում է օրինական ազատազրկման մեջ, կամ երբ բանտարկված է դատարանի որոշմամբ:
- երբ ներկայացվել է SDI հարկերից կրոնական նկատառումներով ազատման պահանջ:
- եթե անհատն այլևս աշխատանքի շուկայի մաս չի կազմում:
- երբ ստանում է արտադրական վնասվածքի փոխհատուցում DI դրույքաչափին հավասար կամ դրանից մեծ շաբաթական դրույքաչափով:

Բողոքարկում

Բոլոր մասնակիցներն իրավունք ունեն իրավունակության որոշման կամ նպաստների գումարների վերաբերյալ բողոքարկելու Վարչական իրավախախտումների գործերով դատավորին (Administrative Law Judge ALJ): ALJ-ի որոշման վերաբերյալ հետագա բողոքարկում կարելի է ներկայացնել Կալիֆոռնիա նահանգի Գործազրկության ապահովագրության հարցերի բողոքարկման խորհրդին (California Unemployment Insurance Appeals Board), կամ Խորհուրդը կարող է իր սեփական նախաձեռնությամբ մերժել ALJ-ի որոշումը: Խորհրդի որոշումները կարող են վերանայվել դատարանների կողմից:

Սոցիալական ապահովություն

Հաշմանդամություն ունեցող անձը պետք է դիմի Սոցիալական ապահովության վարչությանը (Social Security Administration)՝ վերջինիս ծրագրերի շրջանակներում տրվող նպաստների մասին տեղեկատվություն ստանալու համար: Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարեք Սոցիալական ապահովության վարչությանը 1-800-772-1213 կամ TTY՝ 1-800-325-0778 հեռախոսահամարով:

Նահանգի պետական ծառայողներ

Նահանգի պետական ծառայողները կարող են Կալիֆոռնիա նահանգի և ճանաչված աշխատողների կազմակերպության միջև բանակցությունների արդյունքում ձեռք բերված համաձայնության միջոցով ընտրել SDI ապահովագրություն: SDI-ի մասին լրացուցիչ տեղեկատվություն ստանալու համար այցելեք **www.edd.ca.gov/disability** կայքը կամ զանգահարեք 1-866-352-7675 կամ TTY՝ 1-800-325-0778 հեռախոսահամարով:

EDD-ն ղեկավարում է առանձին Ոչ արտադրական անաշխատունակության ապահովագրության (Non-Industrial Disability Insurance, NDI) ծրագիր նահանգի այն աշխատողների համար, ովքեր ընդգրկված չեն SDI ապահովագրության մեջ: NDI-ի մասին տեղեկատվություն ստանալու համար զանգահարեք 1-866-758-9768 կամ TTY՝ 1-800-325-0778 հեռախոսահամարով:

Լրացուցիչ տեղեկություններ

SDI ծրագրի վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք EDD-ի կայքը **www.edd.ca.gov/disability** հասցեում կամ զանգահարեք SDI ծրագրի մեր ներկայացուցիչներին՝ 1-800-480-3287 DI-ի համար, կամ 1-877-238-4373՝ PFL-ի համար: TTY օգտագործողներին խնդրում ենք զանգահարել Կալիֆոռնիայի Կոմուտատորային ծառայության (California Relay Service) 711 համարով:

EDD-ն հավասար հնարավորություններ ընձեռող գործատու-ծրագիր է:
Ըստ պահանջի՝ օժանդակ օգնություն և ծառայություններ են հասանելի հաշմանդամ անհատներին: